

ՄԵՐ ԱՅՈՒՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԻՆ

Հասցե՝ Փարիզի «ՎԵՐԱԶՆՈՒՅՈՒՆ» — Ред. на в. «ВЕРАДЗНУТЮНЬ» — Руче
Բաժանորդագիրն՝ 10 Վր. սարեկանի Փարիզի «ՎԵՐԱԶՆՈՒՅՈՒՆ» Roustchouk

ՍՕՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿԱՆ ԿՈՆԿՐԵՏԻՆ

— 0 —

Ներկայ իրերի աճողական գրույթն առաջացած է բնականորեն ներքին իմաստի զօրութեամբ, հասարակական ու տնտեսական որոշ պայմաններին ներկայութեան, մի գործ, մէկ աշխատանք, մի պահանջ դարձել է անհրաժեշտ, անյետաձգելի, ճակատագրական։ Դա՛ որոշ յեղափոխական սոցիալիստական կուսակցութեան ստեղծումը ուստի հայ կեանքում։ Ներկայ են այն հասարակական տարրերը, որոնք յայտնում են բնական ու ստեղծիչ միջավայր այդպիսի կուսակցութեան հիմնուելու ու կազմընդարձակ ծաւալով ու հաստատուն հիմունքներով յեղափոխական սոցիալիզմի հողի վրայ։ Այդ տարրերն են կապիտալիստական ինդուստրիայի պայմանները և դրանց արդիւնք ու դրանցից անբաժան՝ բանւոր դասակարգը, պրոլետարիատը։

Մեր ամեն կարգի նոցիտանալիստները կարող են, որքան կուզեն, իրանց տրամաբանութեան համար վաճան դարձնել իրանց սոցիալիստները, իրանց բուրժուական գաղափարային նախապաշարունակների փոշիով կուրացնել իրանց սեփական աչքերը և կամ իրանց մանրաբուրժուական հակաակումբները գէպի բանւոր դասակարգը սքողել ճոճաւն ֆրազներով՝ հաւաքած աշխարհում ձախից։ Բայց նրանք չեն կարող հերքել այն, ինչ որ փաստ է չեն կարող ուրանալ այն, ինչ որ իրողութիւն է, այն, ինչ որ մասն է հայկական իրականութեան։ Իսկ փաստ է, իսկ իրականութիւն է այն, որ կողմանեան կեանքում հայերը բոլորովին մտած են կապիտալիստական պայմաններ շրջանը և որ, տասն և հինգ-քսան տարի առաջ գրտնւած լինելով գեւ իր սաղմային վիճակում, այսօր արդէն աճած ու մեծացած՝ բանւոր դասակարգը արձանացել է նահապետական անկաճ կարգերի աւերական վրայ։ Իսկ այնքան, ուր կայ

կապիտալիստական ինդուստրիա ու պրոլետարիատ, կա՛յ նաև սոցիալիստական աշխատանքի հող, կա՛յ նաև սոցիալիստական որոշ կուսակցութեան գոյութեան իրաւունք և անհրաժեշտութիւն, իբրև մարմնացում բանւոր դասակարգի շահերի ու ձգտումների և օրդան ու պայման նրա քաղաքական կազմակերպման և նրա սոցիալ-քաղաքական կուրսի։

Ռուսահայ կեանքում այդ սոցիալիստական աշխատութիւնը և ուրեմն սոցիալիստական որոշ կուսակցութեան գոյութիւնը, ուրեմն, ներկայանում է ո՛չ միայն ժամանակիս ամենաշրտապ պահանջ, այլ և անժխտելի և անխուսափելի պայման հայկական իրականութեան մէջ և հայ յեղափոխական գործում։ Եւ աւելի որդհանուր հայ փոքրիկ ազատագրութեան ու փրկութեան ինդրի բնական, հիմնաւորեարմատական լուծումը գտնելով սոցիալիզմի մէջ, գտնում է ուրեմն հայ սոցիալիստական գործի շարունակական առաջխաղացման ու զարգացման մէջ։ Այլ խօսքով դա նշանակում է թէ այդ ինդրի ճշմարիտ և իսկական լուծումը գտնում է հայ սոցիալիստական կուսակցութեան յաջողակ կազմակերպմանը մէջ ընդդէմ ամեն հասարակական-քաղաքական արգելքների ու խոչընդոտների, որոնք ներկայանում են իբրև ոյժեր ու տարրեր կոնսերւատիւսի ու յետադիմութեան և այդպիսով խափանում այն ուղին, որն աստիճանաբար տանում է գէպի սոցիալիզմի վերջնական յաղթանակը։

Ա՛հ, մենք անգիր գիտենք մեր նացիոնալիստների սերտած առարկութիւնները, որոնք յօգուտ իրանց չունեն մինչև իսկ այն մեղմացուցիչ պարագան, թէ արդիւնք են որ և է ուսումնասիրութեան հայր, կեանքի ներկայ պայմաններին։ Ապացոյց դրան ա՛յն, որ նրանք աչքախուփ կերպով ուրանում են նոյնիսկ իրականութիւնը, և այդ ինքնակամ կուրսութիւնը սքողում են անմիտ

ու տխար առարկութիւններով սոցիալիզմի գէ՛մ առհասարակ — որի այդ ու բէնն իսկ չը գիտեն — և մասնաւորապէս հայերիս մէջ։ Բայց ի՛նչ դժբախտաբա՛ն կուսակցի իրերի անողոր տրամաբանութեան դէմ, որ հայ հասարակութեան ամենախորին ու ամենացած խաւերի ծոցում արդէն սկսել է դրդեցնել բանւորական երկրաշարժի աւար թրնդիւնը և միաժամանակ հօրիզոնի հեռատանում ծագեցնել նորարար շարժի ծիրանի գոյները։ Իբրև այդ տրամաբանութիւնն այն է, որ արդէն այժմ, մի տարից ի վեր մանաւանդ, ինքնաբերաբար և իրանց տնտեսական շահերի բերումով, հայ բանւոր դասակարգից առաջանում են առաւել կամ նւազ գիտակցական տարրեր, լուով տասնակ հազարներ, որ մասնակցում են կողմանեան բանւորական շարժումներում։ Յեղափոխութեան այդ բնական տարրերի հզօր մղումը գէպի առաջ, դրանց շահերում ամփոփւած սոցիալիստական ձգտումները, դրանց պատմական ազատարար կուրսում — այդ բոլորը չեն տեսնում, չեն կարող և կամ չեն ուզում տեսնել նացիոնալիստական իրաւունքով շղկւած մեր հակաճառողները։

Բայց իրականութիւնն այդտեղ է, և հայ բանւոր դասակարգի շարժումները, իբրև յեղափոխութեան ու սոցիալիզմի ամենահիմնական ազդեակներ, պէտք է դրեն քաղաքական կուրսի նըպատակայարմար ուղիի վրայ, պէտք է ամփոփեն իրանց բնական հոտանքի ուղղութեան մէջ։ Եւ դա կը լինի սոցիալիստական աշխատութեամբ, որ նշանակում է սոցիալիստական կուսակցութեան շանքերով — ագիտացիայով ու պրոպագանդայով, մի կողմից զարգացնելով բանւորների դասակարգային գիտակցութիւնը և ինքնագործունէութիւնը և միւս կողմից կազմակերպելով նրանց իբրև քաղաքական որոշ մարմին։

Եւ ահա՛ ինչու բնական, անյետաձգելի և անխուսափելի պայման է մեղանում այժմ՝ կարմիր

մեկ ընդարձակ ու հզօր սոցիալիստական կուսակցութիւն, որի գործը յանուն սոցիալիզմի՝ միակ և արժանական լուծում է նաև հայ ազգային խնդրի։ Եւ ունենալով նպատակ սոցիալիզմի իրականացումն ո՛ր յաղթանակը, այդ կուսակցութեան մտակայ ամփոփական նպատակներն են յայտնում, կործակելով բուսալիզ կարգեր, ձեռք բերել ընդարձակ ֆարապական ազատութիւններ՝ ամփոփւած ուսկապարակակ աւելանալուքութեան մէջ՝ ժողովրդային ինքնիշխանութեամբ։ Եւ դրա հետ միասին հայ սոցիալիստական կուսակցութիւնը պէտք է օգնէ և աշակցէ այն ամեն յեղափոխական շարժումներին, որոնք ձգտում են տապալել բռնակալ լուծը։

Այդպիսի սոցիալիստական կուսակցութիւնը, յայտնելով արտայայտիչ բանւոր դասակարգի պատմական ձգտումներին, որով ուրեմն սոցիալիզմի, այսօր նրում է նաև այն բնութիւնը յեղափոխական մարմինը, որ հիմնւած լինելով յեղափոխութեան բնական տարրերի, պրոլետարիատի, վրայ, լինէ՛ կուսած է և լինէ՛ ընդունակ ու կարող կը լինի առաջ մղելու գէպի յաղթանակ Յեղափոխութեան մեծ գործը, որը տանում է գէպի ամեն ազգերի և ամբողջ մարդկութեան ազատագրութիւն։

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Ռուսական տարրի բուն պետութեան վերջին աւազակութիւնները շարժերի կարծիքով տեղի պիտի տալին ուստի հայ փողովորդի մէջ ծայրայեղ լքումի և սրահետ առատ հունձք պիտի մտակարարէին ուստի ման քաղաքականութեան անպատակաւ հերոսներին։ Ամեն մի քաղաքի տնտեսումը կը հանդիպէիք մարգարէներին, որոնք կը դուշակէին, որ հայ եկեղեցու իրաւունքների ստանահարումն ու եկեղեցական և վանական կալուածների աւազակաբար յափշտակումը կործանիչ

հարաւորներ կը լինէին, որից առ- սահայը էլ աչք բանալ չպիտի կարողանար:

Այդպէս էր, այս՛, երեկւայ տրամաբանութիւնը: Բայց այ- սօր, որ արդէն բռնակալութիւնը խաղացել-վերջացրել է իւր ա- նիւրաւ խաղը, իրականութիւնը բոլորովին հակառակեղանակացու- թեան կը յանգեցնէ մեզ:

Այսօր ամենափչացած հայ բուրժուան անգամ փոխել է իւր հաւատոյ հանգանակը — նա ար- գէն գիտակցութեան նշաններ ցոյց կը տայ. և փոխանակ լքումի՛ այսօր Ռուսաստանի ամեն կող- մերում հայ ժողովրդի սրտում կը տիրէ վերազարթումի, ցանկալի վերակենդանութեան հոգին:

Մի քանի ամիսներ միայն սրանից առաջ հայ յեղափոխա- կան գաղափարին մաղաչափ ան- գամ նշանակութիւն չուող — և դեռ նրա վրայ հազար ու մի ա- նարգանքներ շարտող — հայ-աղա- ները, հայ-սեւագլուխները... այսօր կը խոստովանին, որ հա- յութեան գոյութիւնը պահպանող միակ յուսալի նեցուկը լաւ կող- մակերպւած, ընդհանուր հայու- թեան սեփականութիւնը գարձ- րած յեղափոխութիւնն է և պէտք է լինի, որ իրենց երեկւան ար- համարհած բանուր դասակարգը իրաւամբ կոչելու է՝ ժամանա- կակից քաղաքականութեան ան-

պարա զո՛ հայ ժողովրդի փըր- կիչը... . .

Թշնամին ինքը իր թէն լար- բարոս, բայց և անխոհմ՝ քայ- լով բացեց ուստահայ ժողովրդի աչքը և ուրիշ կերպ չէր էլ կա- լալ լինել:

Այդ լաւական չէ. նոյնիսկ ուստ ժողովրդի մի սրոշ մասը, որ երէկ գէպի մեկ բարկացա- կամութեան նշոյլ անգամ չէր ցոյց տայ, այսօր, տեսնելով մեր կրած անողոք և անարդար հար- ւածները, տեսնելով ուստ պետու- թեան անխիղճ վերաբերումը, դէպի իր հայ հպատակների գա- լուսօր, արագործւած իրաւունք- ներն ու ինչքը, — էնց ուստ ժո- ղովրդը, ասում եմ, այսօր չի վարանում բարձրացնել իր ար- դար բոլորը անողոք Յարի և և- նիչէրի Գոլիցինի արարքների դէմ... Կիսկի վերջին շրջանակար- գութիւնների ժամանակ այդ ե- ընդմիջը բաւական աչքի էր ընկ- նում և կարող էր բաւական ա- մաչեցնել Ռուս պետութեան խա- ւարամիտ գործիչներին, եթէ սը- րանք սարական այգ-ամօթի մասին հասկացողութիւն ունենա- յին... . . .

Սրանից մի քանի օր առաջ կանցնէի մի գիւղից, որտեղիկու- գակներն այդ կողմերում յայտնի են իրենց հայատեացութեամբ: Մէր ձիերին մի փոքր դադար

տալու նպատակով ցած եկանք գիւղի եկեղեցւոյ առաջը, ուր կողակների մի հոծ բազմութիւն հաւաքւած՝ կը վիճէին ինչ որ խնդրի մասին: Հետաքրքրելով մօտեցայ նրանց. տեսնեմ որ խօ- սակցութեան առարկան Գոլիցինի կեանքի դէմ կատարւած փորձն է:

— Կազէթները գրել էին, ա- սում է նրանցից մին, — թէ փորձ կատարողները հայեր են ե- ղել... . .

— Եթէ ես էլ հայ լինէի, պա- տասխանեց մի ուրիշը, — ես էլ այդպէս կը վարէի իմ եկեղե- ցին կողպտողին հետ... . .

Իսկ մի ուրիշը աւելի ոգե- ւորելով աւելացրեց.

— Մի՛շք որ փորձ կատա- րողները չհասան իրենց նպատա- կին... . .

Նրանք գիմեցին իմ կար- ծիքին հոգեկ շարունակ մա- սին. ես պատասխանեցի, որ յոյ- ներիս համար հեռաքրքրութիւ- նից չուրկ է այդ նորութիւնը (նրանք ինձ յոյն կը կարծէին):

Փաստը ինքն ըստ ինքեան միսխարական է և ցոյց է տա- լիս, որ ուստ պետութիւնը իր վերջին աւաղակութեամբ օգուել է միայն նիւթապէս, բայց իր քաղաքական ձգտումները մնալու են անկատար... . .

Այսպէս թէ այնպէս, բանը նրանումն է, որ եթէ ուստահա-

յերս ևրէկ աւելի իրաւունքների տէր էինք, այսօր աւելի գիտակ- ցութեան տէր դարձանք. և այդ գիտակցութիւնն է, որ հետզհե- տէ խոսանալով ու ծաւալելով բու- յոր ուստահայերի սրտերում, — մի օր վերստին կատարեալ տէրը պիտի գարձնէ մեզ մեր կողմը իրաւունքների: Յանկանք միայն որ այդ գիտակցութիւնը խոր ար- մատներ ձգէ մեր սրտերի մէջ:

Հմայեակ Արամեանց

Կովկաս 22 Դեկտ. 1903 թ.

Ն Ա Մ Ա Կ Պ Ս Ր Ս Ս Ս Ս Ն Ե Ն

1903 Նոյ. 29 Թ Ա Ի Վ Զ

Ընթերցողներին արդէն յայտ- նի է որ Թաւրիշի Լիւրա թագի երկսեռ գպրոցները տակաւին բակ են: Լոյս տեսած թեր և դէմ կարծիքները արդէն բաւականա- չափ աւելկութիւններ աւել են հայ հասարակութեան այս գպրոց- ների վերաբերմամբ կատարւած գծալղ պատահարների մասին: Ես կամենում եմ միայն հերքել մի թիւր կարծիք, որը չիխտեմ ինչպէս-անշուշտ խնդրի մանրա- մասնութիւններին լաւ ծանօթ չե- ղող և հակայնը սփոխական մարդ- կանց ասէկօսէնկրից—առաջ է ե- կել Թաւրիշի հայ հասարակու- թեան մէջ: Ժողովրդի զանազան խաւերում խօսուում է, որ դըպ- րոցների փակման և ցարդ փակ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն 26

ԱՆԻԹԱՆՈՒԹԻՒՆԸ

Պ Փ Ե Ն Յ Փ -ի

Բարգիւնեց Ըրանտերենէ

Ա. Տ-Եան

ԱՆԻԹԱՆԱԿԱՆ ՏԱՐՔԻՔԱՆ ԵՒ

ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Մենք պիտի աշխատինք զօրաւորացնել կերպով ներկայիս մէջ հնա- րաւոր ազատութեան աստիճանի բար- ձրացման, որպէսզի կարողանանք մաք- րել ճամբան պատասխանից, որունը կարգիլին հաւասարութեան տիրապե- տումը: Ալ ազատութիւնը կեղծիք մը չպիտի ըլլայ, այլ՝ իրականութիւն մը: Ազատութեան ճշմարիտ զգացումը պի- տի թախանցէ մեր սրտերուն մէջ, պիտի ուղղէ մեր գործերը, Ռեքնի, նախապէս գործադրելի այն բոլորը, ինչ որ կապանուէ հաւասարութեան յոռաշարժումը: Մենք չենք բող- ձար տեսնել հաւասարութիւնը և ա- զատութիւնը հոն, ուր այս վերջինը ձեռք կը բերուի միայն ի վնաս մը- նացեալներուն, կամ հոն՝ ուր ան ըն- կերային կեանքի ոչնչացման կը յան- գիլ Եւ որովհետեւ հաւասարութիւնը անհրաժեշտ պայմանն է մարմինին և հոգիին զարգացման, մենք պարտաւոր ենք բաւական ազատութիւնը, երբ ան պատուար մը կը հանդիսանայ տնտե- սական հաւասարութեան կռուին, այս- ինքն՝ թշուառութեան բարձման:

Հաւասարութեան կիրքը կ'ոգե- ւորէ բոլոր աշխարհը, անոր ազդեցու- թիւնը կը նշմարուի մեր բոլոր գոր- ծերուն մէջ, կ'որոշէ ան մեր ամբողջ

կեանքին ճակատագիրը, մեզ կապան- վէ քաղցէն և պէտքէն: Ամեն ոք կը զգայ հաւասարութեան պէտքը, մինչ- զհո ազատութեան պէտքը կը զգացուի մենք շատ քիչերէն, այսինքն աւելի ազնիւներէն, ինչպէս նաեւ մեր սե- րունդի յուեզոյն անդամներէն: Ռե- քնի ամենաստիպողական գործն է աշ- խատիլ հաւասարութեան յոռաշարժ- մութեան համար: Առանց հաւասարու- թեան չկայ աշատութիւն, այս է պատ- մութեան յաւիտենական գասը, այս է ամեն օրուան փորձը. և սակայն այս ճշմարտութիւնը այդքան յաճախ կը մոռցուի:

Կապիտալիզմը մեզ օտուց վաճա- րականական սպատութեամբ. անիշ- խանութիւնը կը մասնանջէ ազատու- թիւնը անասունին, որ անանձնացած կապիտալ Սօցիալիզմը, հաւասարութեան ընկերութեան մը մէջ, պիտի տայ մանուկ ազատութիւն, սը պիտի կա- րողանան վայելել և որուն իրաւունք պիտի ունենան:

Սօցիալիզմը յաղթանակը յաղթա- նակը պիտի ըլլայ նոյնպէս իրաւունք- քի, որ միայն ընդհանուր շահերու ար- տայտարարութիւնը պիտի ըլլայ: Այս է բարոյականութեան յաղթանակը. վա- սընդի մեր կիւր և մենքն կը պահան- ջէ զորոգութիւն և նոյնիսկ անձնու- րացողութիւն: Այս է առողջ մտքի և առողջ գատողութեան յաղթանակը, վասնզի ան փորձի և գիտութեան վրայ հիմնուած է: Մոլեռանդը կարող է կարծել որ գտ- բաւական չէ ներկայիս հնարուօրը, և հաւանակամբար, գործելու համար պէտք պիտի ունենայ ամենախելաւո յոյսերու խթանին: Գիտական ոօցիա- լիսա՛՛ նշմարելով ճամբուն ծայրը պայծառ մարդկութիւնը՝ կը զոհանայ ճամբուն անաշխիտ օթեանը անցնելով: Առնուած ճամբան ա՛յնքան կարճ

է, և սակայն առնուելիք ճամբան ալ դեռ ա՛յնքան երկար է: Եթէ փնտ- ւենք իսկական ուղին, զգանք որ կը յառաջանանք, այն առնն ներկայ և րուշը լրացուցած կըլլայ իր պար- տականութիւնը:

Առաջին օթեանին, ուր կը յու- սանք երկար կանգ չտանել, կը գըտ- նանք սօցիալիստներուն «նազը և նա- ւաւարուքները յոյսիս հաւատ»ը. քիչ հետուն՝ քոմիւնիստներուն (համա- նականներուն) «խաւախախախ իր պիտ- ին հաւաւաւ»ը. իսկ աւելի հետուն՝ հորեզոնի ամենայնպէս ծայրը՝ կը նը- մարենք անիշխանութեան. «իշխող ան- նաւ»ը:

Այսօր, տախա ին մենք պարտա- ւոր ենք մեզ քաշկտելու աստիճանի- օթին ներկայ կող, ծիւրած սերունդի հետ զօր կապանքերը այնքան երկար ժամանակ և այնքան ցաւալի կերպով սեղմած և, որուն հոգին ու մարմինը անպատուած են:

Մենք չենք կարող պահանջել այս թշուառներէն այն, ինչ որ կարող պիտի ըլլայինք հաւասարութեան և ազատութեան մէջ ծնած, մեծցած, լաւ սնուած կենդանի ու թարփ սերունդէ մը պահանջել:

Մեզի կըս պատեն ու կըսպտանան դուն յուսախաւարութիւնները, վերանկու- մը աւելի խոր վիճեցու մէջ, քան այն խորխորատները, ուրիշ կը ջանանք ուժերս ելլել, եթէ շատ պարտինք մեր ուժերուն և միջոցներուն, եթէ այդ- օրուան գէշ մտած և ուժասպառ մարդկութեան անիմաստ պահանջներ ներկայացնենք:

Վերջիս Գօնախտերանը, որ տա- րիներ շարունակ այցելեց Ամերիկայի բոլոր հասակական ընկերութիւննե- րը, թող այդ ազնիւ մարդուն ճակա- սագիրը մեզ իրեւ փրկաւէտ ազդա-

րարութիւն և գաս ծառայել, իբրև ա- նոնց վարդապետութիւններուն ջերմ կուսակից, ան քննեց չանկանօրէն ա- նոնց ընթացքը և իր ամբողջ կեանք- քին մէջ անոնց նեցուկ եղաւ իր խոր- հորդներով ու գործերով:

Այսօր երբ ան ճանչցաւ դան ի- րականութիւնը՝ կորսնցուց իր բո- յոր յոյսը: Ան ստորութիւն գտաւ հոն, ուր մաքրութիւն կը սպասէր, չա- փազանցութիւն՝ փոխանակ չափաւոր- ութեան, ծուլութիւն՝ փոխանակ գոր- ծունեութեան, անտարբերութեան և ոչ անձնութեան: Խաղաւանանք՝ փոխանակ ազնիւ զգացումներուն «ես մարդկութիւնը երեցածէն աւելի լա- ւագոյն կը կարծէի» եղաւ ուխտաւոր- քին միւսմազակ տրտուշը: Անոր սկզբունքները կամ անձնու էին և կամ կանխած էին իրենց ժամանակը: Ան ապապէս եղաւ փորձը վհատած ծե- րունիին, որ մտայլ ու տխուր, կը ցանկայ մահուան... . .

Մենք կարող ենք յուսալ կա- տարեալ ազատութեան ընկերութիւն մը այն ասեւ, երբ եսամուլութիւնը անհետանայ սրտերէն, երբ մարդ ինք- զինքը գոհելու մէջ աւելի հաճոյք զգայ՝ քան վայելելու մէջ, երբ սէրը աւելի զօրաւոր ըլլայ՝ քան անձնա- կան շահը:

Բայց որքան երկար ժամանակ որ տիրէ, եսամուլութիւնը՝ անիշխանու- թիւնը պիտի մնայ ցնոր մը: Անհա- տական ազատութեան բոբազանուր միայն պիտի ուշացնէ ազատութեան արեգակին ծագումը ամբողջ աշխարհ վրայ:

Այս է անո որ, բարոյական տե- սակէտով, նոյնպէս կը դատապարտէ անիշխանութիւնը:

ՎԵՐՉ

Տնայու պատճառը Հնչակեան-Գաշ- նակցական կուրն է :

Լիլաւայի թաղականների ընդ- հանուր ժողովը օրինաւորութեան բոլոր կէտերի համաձայն ընտրել է Հոգաբարձութիւն. այդ ընտրու- թեան դէմ չըլլաւ իր ոչ մի բու- ղոքող ձայն, Հոգաբարձութիւնը թեմակալ առաջնորդի հրատար- նոք անցել է պաշտօնի վրայ իւր և խիստ պատշաճ ու օրինաւոր պայմաններով հրատարակել է նախ- կին Տեսչին և իւր ուսուցչական խմբին : Տեսուչը հրատարակել է գալ, առաջ բերելով այնպիսի պայմաններ որոնց ընդունել ան- կարող է եղել հոգաբարձութիւ- նը : Ստիպւած և հարկադրւած նա - Հոգաբարձութիւնը - մտածել է նոր տեսչի և նոր ուսուցչական խմբի մասին, որ և կազմել ու վարձել է ըստ իւր հայեցողու- թեան : Այս բոլոր ժամանակա- միջոցում Լիլաւայի մի քանի ե- րիտասարդներ, գաշնակցութեան դրօշի տակ պատասխարւած ու պաշտպանւած, քանիցս ցոյցեր են արել զանազան ձեւերով, ցոյց տալու համար որ իրանք-ժողո- վուրդը (իրանց խօսքերով) կամ աւելի ճիշդը՝ գաշնակցականները (մեր կարծիքով) ոչ մի կերպ չը պիտի համաձայնեն ընդունել նոր տեսչին կամ՝ ուսուցչին, ով էլ լինին նրանք : Մինչ այս մինչ այն հասել է դպրոցը բանալու օրը, սակայն ուսուցչական խումբը և հոգաբարձութիւնը իւր ա- ռաջ փակ է գտել դպրոցների դռները : Առաջին անգամին ան- կարող բանալ տալու՝ նոքա վե-

րագարձել են ձեռնունայն, իսկ երկրորդ անգամին (քիչ օրերից յետոյ) մի կերպ ներս են մտել, ու կրել են յարձակում՝ բարձր գասարանների աշակերտների, վերջին տարւայ աւարածների և մի քանի դրօշ երիտասարդ- ների կողմից : Ստորոմների և ծառաների պաշտպանութեամբ հոգաբարձուները և ուսուցչին- ըր կարողացել են պատասխարել ուսուցչանոցում և այնտեղ՝ պա- շարման վի ախու՛մ մնացել են այնքան, մինչև թագաժառանգի ներկայացուցիչը՝ մի խումբ ուսու- կաններով օգնութեան է հասել և ազատել պաշարածներին 150ից աւելի աշակերտների կատաղու- թիւնից : Որովհետև ամենաբար- ձրը, այն է վեցերորդ դասարա- նի աշակերտները 16-17 տարե- կանից աւելի մեծ չեն, ուրեմն կարելի է եղրակացնել որ դոքա, մանաւանդ 150 հոգի միանգա- մից, առել է թէ բաժանմունք- ների մանուկներն էլ հետները, չէին կարող ինքնաբերաբար և դիտակցութեամբ կազմակերպել այդպիսի ցոյցեր առանց թեմազ- լողների, առանց զեկավարողնե- րի : Իսկ թեմազողները վերո- յիշեալ նոյն պարոններն էին, ու լոնք առանց ծածկելու իրանց դերը՝ գտնւել էին ցուցավայրում և պարբերաբար բանակցութեան են մտել ի գիմաց «աշակերտու- թեան» կամ «երիտասարդու- թեան» առաջնորդարանի հետ : Նոյնպէս այդ մի քանի պարոն- ներին պիտի վերագրել և այն պրօկլամացիաների հրատարակու-

թիւնները, որոնք լոյս են տես- նում «Երիտասարդութիւն» ստու- ռագրութեամբ :

Գործերի ընթացքը նոյնու- թեամբ շարունակուում է մինչև այսօր. իսկ ժողովուրդը կատար- նալ լուծիւն է պահպանել և ոչ մի ձայն ծպտուն չի հանել ցարդ, եթէ չը յիշատակենք այն, որ սկիզբներում 100-ից աւելի ստորագրութիւններով մի թուղթ ներկայացրեց առաջնորդարան, ու ըրով իւր վտաահութիւնը և հա- մաձայնութիւնն էր յայտնում Հո- գաբարձութեան :

Այս է հաջ բուն իրողութիւն- ների համառօտութիւնը : Եթէ գաշնակցականները չեն կարողա- նում տանել ոչ - գաշնակցական ուսուցչական խմբի ներկայութիւ- նը, այդտեղ մեզուտը չեն Հըն- չակեանները, եթէ հոգաբարձա- կան և ուսուցչական նոր կազմե- րի մէջ մի քանի հոգի Հնչակե- աններ կամ Հնչակեանութեան համակրողներ կան, դորանով էլ խնդիրը չի կապուում Հնչակեան կուսակցութեան հետ : Եթէ եղի- չէ վարդապետ Մուրառանը ինչ ինչ ինտրիգներ է լարել կապու- լուծելու նախկին ուսուցչական խումբը և գաշնակցականների ըն- տրած հոգաբարձական կազմը, մենք չը գիտենք, բայց եթէ այդպէս էլ չ'ընի, դարձեալ խըն- դիրը կապ չունի Հնչակեանների հետ, իրանք գիտեն իրանց հա- մակիր և իրանց ընտրած վարդա- պետը : Եթէ նոյնիսկ մի րոպէ ընդունենք որ հոգաբարձութիւնն էլ զոհ է եղել եղիչէ Մուրառ-

եանի ինտրիգներին, այսուամե- նայնի դա էլ կապ չունի Հըն- չակեանների հետ և Հնչակեան կազմակերպութիւնը պատասխա- նատու չէ հոգաբարձութեան սը- խալներին, չը նայելով որ այդ- պիսի բան չը կայ և հոգաբար- ձութիւնը միշտ համակիր վերա- բերմանք է ունեցել նախկին խումբ- րին և հէնց այդ պատճառով էլ սկզբում նրան է հրաւիրել :

Ուրեմն այն կարծիքը թէ Հնչակեանները և Գաշնակցական- ները կուսում են և մէջտեղ ու- սումնարաններն են տուժում, սը- խալ է և անհիմն : Այդպէս կա- ռող են ասել միայն շարամիտ- ները՝ մտրեցնելու համար միա- միտներին և ինդրի մանրամաս- նութիւններին անմտօթ մարդ- կանց : Ընդհակառակը կախը տե- ղի է ունենում Գաշնակցութեան պատկանող մի քանի անհատների և ժողովրդի կողմից օրինաւորու- թեամբ ընտրւած և ժողովրդի վստահութիւնն ու համակրութիւ- նը վայելող Հոգաբարձութեան միջև : Մենք միայն կարող ենք ցուցել, որ յեղափոխական մար- անձնական և նեղ ուսակցական շահերի համար տակնուվրայ են անում հասարակական գործերը, գրում են յեղափոխականի յարգ- քում և անբարոյականացնում են 7-15 տարեկան մանուկներին, բը- բոտացնելով նրանց աչքային իշխանութեան պէս :

ԱԻԵՏԻ ՆԱԶԱՐԲԷԿ 9
ՀԱՐԱՌՍՍ ԹՁՈՒԿԸ
(Հ.Ա.Ռ.ԲԵԼԵԱՆ ԵՒ ՀԱՍՏԵՆ)

Այո՛, հեկնց այդ և եղել Առաքել- անի յոյսը, որը նրան տալ է լիբը քաջութիւն հրադարակի վրայ երե- ան դալու իր զրգարտութիւններով : Նա մտածել է այսպէս. — «Հօ՛՛ նա- զարբէկը չէ վեր կենալու և իրանց ներքին անցուդարձերի մասին պատ- միլու հասարակութեանը, և այս վեր- ջինս, ուրեմն, իմ Առաքելանիս, բոլոր ստերն ու վատաբանութիւննե- րը հալւած իւզի տեղ կընդունէ, և այդպիսով ևս կը ստանամ մի փառա- տը հռչակ՝ նազարբէկի գեղեցմանա- փորի անուն . . . » Եւ այդ մտքով իրախուսած՝ թղտղը շարունակել է իր մտածումներն այսպէս. — «Նազար- բէկը հասարակական գործիչ է. նա իմ աչքին փուշ է դարձել այն օրից իվեր, ինչ ևս Առաքելանս, բունեւ և՛ մի խիստ տեղագացուով, ինչ ևս, ուզում եմ՝ «մեծ մարդու անուն» . . . » մի՞թէ, յիբարի, աւելի մեծ հրաշք չ'է՞, որ մի թղտղ կարող է դառնալ հսկայ : Սպա- սեցէ՛ք, ևս աշխարհը պէտք է դարմաց- նում : Գլխին մէջ երկու հատիկ շրջուն կարծիք, ինքս անկիրթ ու ազատ ամեն հասարակական ու քաղաքական հար- ցերում, այո՛, այդ բոլորը ճիշտ է : Բայց ի՛նչ կայ, մեր ազգային հրադա- ռակի վրայ այնքան ազդեանք գործի- չի տեղ են անցնում, ևս նրանցից ին-

չո՞վ եմ պահա. այնքան նախանձոտ- ներ, ինտրիգաններ ու շարականներ կան, որոնք նոյն նազարբէկի թշնա- մ'ն են, ևս նրանցից ինչո՞վ եմ պա- կաս» և այլն : Եւ այս Առաքելան ասպետի դատանցանքները շարունակ- ւում են այսպէս. — «Այո՛, այո՛, ա- սիթը սքանչելի է նազարբէկի դէմ յարձակելու համար : Օգտեմ նրա ըն- տանկան ներքին անց ու դարձերից ևս մի՛ գլուխ գրեմ ինչ որ գրելիս ծայ- րին գայ. ո՞վ կարող է իմանալ, թէ ո՞րքան զրգարտութիւններ են իմ ա- սծները, մինչդեռ ստուեր միշտ ձը- ցած կը լինեմ նազարբէկի վրայ : Չէ՞ որ Վօլտէրը (տեսնո՛ւմ էք, Վօլտէրի անունն էլ գիտէ) տակ է թէ՛ «բան- րասեցէք, զպարտեցէ՛ք, միշտ մի հետք կը մնայ ամեն զրգարտու- թիւնից» : Եւ հասարակութեան աչ- քին յանկարծից թող փչելու համար կօզնւել մի կիս զրաւակաւ գրպարտ- րեալք, որ ուրիշներն են հնարել նա- զարբէկի դէմ : Ճիշտ է, վերջինս իր ժամանակին փառաւորս պէս ջրել է այդ, բայց ևս կը ձեռնացնեմ նախապէս — ևս այնուհետեւ բանս բան կը լինի, և փառս նեխած ապուրն էլ հասարա- կութիւնը կուշա-կուշու կուլ կը տայ . . . և . . . »

Ահա այդ է Առաքելանի հոգեա- նական տրամաբանութիւնը, որի ար- գելներն է իր աղոտութիւնը : Ինչ որ դէմ : Թղտղը ճիշդ է թափում հսկայ ձեռնաւ, ինչպէս գործը՝ եզ, ևս ի- րան ներկայացնել հասարակաց շահե- րի պաշտպան, մինչդեռ ոգորմնին յափշտակած իր անձնական կրքերով՝

մտացել է նշանաւոր առակի բարոյա- խօսութիւնը.

«Սըրախօսի ոտքի տակ
Չարդըւում է կամուրջը
Եւ այդպէս նա զըլորում է ջրի
յատակ» :

Եւ կամ այն առակը, ուր ասում է —

«Իրեն սարքից դատաւոր,
Բայց ամենքը տեսան որ
Նորա՛ գլխի ետեւին
Երկու երկայն ականջներ
Կերեին. . . »

Վերջապէս, Առաքելանի քայլն ու- նի մէկ ուրիշ շարափնաւ կողմ ևս : Բնական է, որ ամեն մէկ լրջամիտ ընթերցող իր արձամարտնքը կուղղէ Առաքելանի հասցէին, զայրոյթի շեշ- տով ասելով նրան. — «Ի՛նչ գործ հա- սարակութեան, թէ սրա կամ նրա տանը որ պիտի ներքին կօմէղեաներ կամ դրամաներ են տեղի ունենում : Առանց դրան հասարակութիւնն ինքն այնքան ծանր, օրհասական իսկ խըն- դիրներ ունի իր գիմաց, առանց զը- րան այնքան հասարակական կատա- կիբութիւններ, դրամաներ ու տրա- գէղիաներ ևս կատարում նրա հրապա- րակային ասպարէզում, առանց դրան այնքան պարտակալ ու թիւններ, գոր- ծեր ևս անելիքներ ունի հասարակու- թիւնը : Եւ, ուրեմն, կատարեալ ժա- մավաճառութիւն կը լինի նրա կող- մից հետամուտ լինել սրա կամ նրա, ո՞վ որ էլ լինի այդ մէկը, ներքին մասնաւոր խնդիրներն : Այլ ևս աւե- լի, հասարակարիւնը չի կարող ձեռնա-

ւնալի յիկել ուրիշների ներքին ցայտեկ- ները քափակելու կեղծո՞ւմ ներքին, գաղտնիքնե՛ր, որոնք նրան, վերջա- պէս, բնաւ հետաքրքիր էլ չ'են կ'ընող լինել : Հետեւաբար, Առաքելանը ըզ- րազեցնելով հասարակութեանն այդպի- սի խնդիրներով, իսկապէս յանցանք է գործում ևս յամենայն դէպս ծաղրում է նրան, «մարդու տեղ չէ գնում», ևս թաղելով, որ նա գո՞հ կը դա՛նայ իրա, Առաքելանի, լարած թակար- դին : Բաւախան է, վերջապէս, անձ- նական գծում հաշիւներով դրդւած, այլ ևս այլ անձերով դրազեցնել հա- սարակութեանը, որին խօսք ևս գործ է հարկաւոր : Բաւախան է ուսած ու փրօւն ֆրազների թեփամորթ հոգե- լով, շեղել նրան իր ինքնագործու- նէութիւնից ու նպատակներից, Բա- ւախան է կեղծ պատրասյների տակ անհաշտութիւն, խոտով թիւն ու ռիս սերմանել հրապարակի վրայ ևս ստեղ- ձել պղտոր ջուր, ուր քաջ ու ճար- պիկ են միայն ձուկ որսացողները, շահախնդիր ու բախտախնդիրներ, ևս ուր հասարակութիւնը միշտ ենթակայ է վնասի, կորստի, այլ ևս վտանգի : Բաւախան է : Մ'կ'են հասարակական ամբարները, գառնազգեստ գայլեր՝ շահագործող հասարակութեան պարզա- մտութիւնը, տարէ՛ք ձեր մտքի ան- կիւնները ձեր խաղերն ու դաւերը, դո՛ւքս հասարակական տաճարից . . . »

Ահա հասարակութեան զայլոյթն Առաքելանի հասցէին :
(Շարունակելի)

